ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 2-Ն	*Տեսակը*	Պաշտոնական Ինկորպորացիա
Տիպը	Հրաման	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀԳՏ 2015.04.01/8(520) Հոդ.74	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	Ազգային անվտանգության ծառայության տնօրեն	*Ընդունման ամսաթիվը*	11.03.2015
Ստորագրող մարմինը	Ազգային անվտանգության ծառայության տնօրեն	*Ստորագրման ամսաթիվը*	11.03.2015
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	11.04.2015	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Ծանուցում

15.03.22 N 1-Ն հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետի փոփոխությունն ուժի մեջ կմտնի «Թույլատվական փաստաթղթեր (sw.gov.am)» համակարգի գործարկման օրվանից:

Կապեր այլ փաստաթղթերի հետ

Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՀՐԱՄԱՆԸ ՀՀ ԿՈՂՄԻՑ ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ ԱՌԵՎՏՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻ ՍՏԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՏՈՒԿ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՀ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ՀՀ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ԱՐԳԵԼՎԱԾ ՏՊԱԳԻՐ, ԱՈՒԴԻՈՎԻԶՈՒԱԼ ԵՎ ԱՅԼ ԿՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՀ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ, ՀՀ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ, ՀՀ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՎ ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ, ՀՀ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ԵՎ ՀՀ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԱԾ՝ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻ ՍՏԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՏՈՒԿ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՀ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ, ՀՀ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՀՀ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՎ ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐԳԵԼՎԱԾ ՏՊԱԳԻՐ, ԱՈՒԴԻՈՎԻԶՈՒԱԼ ԵՎ ԱՅԼ ԿՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
16 մարտի 2015 թ.
Պետական գրանցման թիվ 10115083

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ

11 մարտի 2015 թ. **N 2-Ն**
ք. Երևան

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ ԱՌԵՎՏՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻ ՍՏԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՏՈՒԿ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ

ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ԱՐԳԵԼՎԱԾ ՏՊԱԳԻՐ, ԱՈՒԴԻՈՎԻԶՈՒԱԼ ԵՎ ԱՅԼ ԿՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՎ ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԱԾ՝ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻ ՍՏԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՏՈՒԿ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՎ ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐԳԵԼՎԱԾ ՏՊԱԳԻՐ, ԱՈՒԴԻՈՎԻԶՈՒԱԼ ԵՎ ԱՅԼ ԿՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(վերնագիրը լրաց. 15.02.21 N 1-Ն)

Համաձայն «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 2.1 հոդվածի 4-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1524-Ն որոշման 6-րդ կետի՝

(նախաբանը խմբ. 15.03.22 N 1-Ն)

Հրամայում եմ՝

1. Հաստատել.

1) Հայաստանի Հանրապետության կողմից երրորդ երկրների հետ առևտրի դեպքում տեղեկատվության գաղտնի ստացման համար նախատեսված հատուկ տեխնիկական միջոցների Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք ներմուծման և Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքից արտահանման և արգելված տպագիր, աուդիովիզուալ և այլ կրիչների վրա տեղեկատվության Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք ներմուծման, Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքից արտահանման, Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով տարանցիկ փոխադրման կանոնակարգը՝ համաձայն հավելված N 1-ի,

2) Հայաստանի Հանրապետության կողմից երրորդ երկրների հետ առևտրի դեպքում Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք ներմուծումը և Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքից արտահանումը սահմանափակված՝ տեղեկատվության գաղտնի ստացման համար նախատեսված հատուկ տեխնիկական միջոցների ցանկը՝ համաձայն հավելված N 2-ի,

3) Հայաստանի Հանրապետության կողմից երրորդ երկրների հետ առևտրի դեպքում Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք ներմուծման, Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքից արտահանման և Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով տարանցիկ փոխադրման նպատակով արգելված տպագիր, աուդիովիզուալ և այլ կրիչների վրա տեղեկատվության ցանկը՝ համաձայն հավելված N 3-ի:

(1-ին կետը լրաց. 15.02.21 N 1-Ն)

2. ՀՀ ԱԱԾ կառավարական կապի և տեղեկատվության վարչության պետին՝ սույն հրամանի 1-ին կետի 1-3 ենթակետերով հաստատված փաստաթղթերը տեղադրել ՀՀ ԱԱԾ պաշտոնական կայքի առանձին բաժնում՝ նշելով պատասխանատուների կոնտակտային տվյալները:

3. Սույն հրամանի կատարումը հանձնարարել ՀՀ ԱԱԾ օպերատիվ-տեխնիկական գլխավոր, սահմանադրական կարգի պահպանության և ահաբեկչության դեմ պայքարի գլխավոր, պայմանագրային-իրավական վարչություններին:

Գեներալ-գնդապետ՝

Գ. Հակոբյան

Հավելված N 1
ՀՀ ԱԱԾ տնօրենի
2015 թ. մարտի 11-ի
N 2-Ն հրամանի

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ ԱՌԵՎՏՐԻ ԴԵՊՔՈՒՄ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻ ՍՏԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՏՈՒԿ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ԱՐԳԵԼՎԱԾ ՏՊԱԳԻՐ, ԱՈՒԴԻՈՎԻԶՈՒԱԼ ԵՎ ԱՅԼ ԿՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՎ ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՄԱՆ

(վերնագիրը լրաց. 15.02.21 N 1-Ն)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության կողմից երրորդ երկրների հետ առևտրի դեպքում տեղեկատվության գաղտնի ստացման համար նախատեսված հատուկ տեխնիկական միջոցների Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք ներմուծման և Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքից արտահանման և արգելված տպագիր, աուդիովիզուալ և այլ կրիչների վրա տեղեկատվության Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք ներմուծման, Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքից արտահանման, Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով տարանցիկ փոխադրման կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ) մշակվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված և սահմանափակումների ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու, լիազոր մարմիններ սահմանելու և ապրանքների արտահանման և (կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման շրջանակային կարգը հաստատելու մասին» N 1524-Ն որոշման և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ ԵՏՀ) Կոլեգիայի 21.04.2015 թ. N 30 որոշման հավելված N 16 (Տեղեկատվության գաղտնի ստացման համար նախատեսված հատուկ տեխնիկական միջոցների Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծման և Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից արտահանման կանոնակարգ) համաձայն:

(1-ին կետը լրաց. 15.02.21 N 1-Ն)

2. Սույն Կանոնակարգը սահմանում է Երրորդ երկրների նկատմամբ ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին արձանագրությունում (2014 թվականի մայիսի 29-ի Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի հավելված N 7) նշված տեղեկատվության գաղտնի ստացման համար նախատեսված և ապրանքների միասնական ցանկի (այսուհետ՝ միասնական ցանկ) 2.17 բաժնում ընդգրկված (սույն հրամանի հավելված N 2) հատուկ տեխնիկական միջոցների (այսուհետ՝ հատուկ տեխնիկական միջոցներ)՝ Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք ներմուծման (այսուհետ՝ ներմուծում) և Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքից արտահանման (այսուհետ՝ արտահանում) կարգը:

3. Սույն Կանոնակարգում օգտագործվող հասկացությունները կիրառվում են Երրորդ երկրների նկատմամբ ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին արձանագրությամբ (2014 թվականի մայիսի 29-ի Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի հավելված N 7) և Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵՏՄ) իրավունքի մեջ մտնող միջազգային պայմանագրերով սահմանված իմաստներով:

4. Եթե հատուկ տեխնիկական միջոցներն իրենց կազմում ունեն միասնական ցանկի 2.19 բաժնում ընդգրկված ծածկագրային (կրիպտոգրաֆիկական) միջոցներ, ապա ապրանքը միասնական ցանկի 2.17 բաժնում ներառելու մասին որոշումը կայացնում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունը (այսուհետ՝ ՀՀ ԱԱԾ), որը լիազորված է քննարկելու լիցենզիայի տրամադրումը և (կամ) տրամադրելու եզրակացություն (թույլատրման փաստաթուղթ), (այսուհետ՝ համաձայնեցնող մարմին):

5. Հատուկ տեխնիկական միջոցների ներմուծումը և (կամ) արտահանումն իրականացվում է ԵՏՀ Կոլեգիայի 16.05.2012 թ. N 199 որոշմամբ հաստատված առանձին տեսակի ապրանքների արտահանման և (կամ) ներմուծման լիցենզիայի տրման համար հայտի ձևակերպման և նման լիցենզիայի ձևակերպման մասին Կանոնակարգին համապատասխան կազմված լիցենզիայի (այսուհետ՝ լիցենզիա) կամ ԵՏՀ Կոլեգիայի 06.11.2014 թ. N 45 որոշմամբ հաստատված ձևին համապատասխան կազմված եզրակացության (թույլատրման փաստաթղթի) առկայության դեպքում, բացառությամբ սույն Կանոնակարգի 9-րդ կետով նախատեսված դեպքի:

6. Ֆիզիկական անձանց կողմից որպես անձնական օգտագործման ապրանքներ հատուկ տեխնիկական միջոցների ներմուծումը և (կամ) արտահանումն արգելվում է:

II. ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՄԵՋ ՆԵՐԱՌՈՒՄԸ

7. Հատուկ տեխնիկական միջոցներն արտահանման կամ ներքին սպառման համար բացթողնման մաքսային գործընթացի մեջ ներառումն իրականացվում է մաքսային մարմնին լիցենզիայի ներկայացմամբ:

8. Հատուկ տեխնիկական միջոցների՝ մաքսային տարածքում վերամշակման, մաքսային տարածքից դուրս վերամշակման, ժամանակավոր ներմուծման (թույլտվության), ժամանակավոր արտահանման, ազատ մաքսային գոտու, ազատ պահեստի, ներքին սպառման համար վերամշակման, վերաարտահանման, վերաներմուծման մաքսային

գործընթացների մեջ ներառումն իրականացվում է անդամ-պետության մաքսային մարմնին եզրակացության (թույլատրման փաստաթղթի) ներկայացման դեպքում:

Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն) կամ ժամանակավոր արտահանում մաքսային գործընթացների գործողությունն ավարտելու նպատակով հատուկ տեխնիկական միջոցների ներառումը վերաարտահանում և վերաներմուծում մաքսային գործընթացների մեջ իրականացվում է հատուկ տեխնիկական միջոցները ժամանակավոր ներմուծում (թույլտվություն) կամ ժամանակավոր արտահանում մաքսային գործընթացների մեջ ներառելու համար տրված եզրակացության (թույլատրման փաստաթղթի) առկայության դեպքում:

9. ԵՏՄ մաքսային տարածք ժամանման վայրի մաքսային մարմնից մինչև ԵՏՄ մաքսային տարածքից մեկնման վայրի մաքսային մարմին փոխադրման համար հատուկ տեխնիկական միջոցների ներառումը մաքսային տարանցման մաքսային գործընթացի մեջ իրականացվում է առանց լիցենզիայի և (կամ) եզրակացության (թույլատրման փաստաթղթի) ներկայացման:

10. ԵՏՄ մաքսային տարածք ժամանման վայրի մաքսային մարմնից մինչև ներքին մաքսային մարմին, ներքին մաքսային մարմնից մինչև ԵՏՄ մաքսային տարածքից մեկնման մաքսային մարմին փոխադրման համար հատուկ տեխնիկական միջոցների ներառումը մաքսային տարանցման մաքսային գործընթացի, ինչպես նաև հատուկ տեխնիկական միջոցների ներառումը մաքսային պահեստի և ոչնչացման մաքսային գործընթացների մեջ իրականացվում են հատուկ տեխնիկական միջոցներն այլ մաքսային գործընթացների մեջ ներառելու համար ներկայացված լիցենզիայի կամ եզրակացության (թույլատրման փաստաթղթի) առկայության դեպքում:

11. Չի թույլատրվում հատուկ տեխնիկական միջոցների ներառումն անհարկ առևտրի և պետության օգտին հրաժարվելու մաքսային գործընթացների մեջ:

III. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

12. Լիցենզիայի ձևակերպման համար իրավաբանական անձինք և որպես անհատ ձեռնարկատերեր գրանցված ֆիզիկական անձինք (այսուհետ՝ հայտատու) ՀՀ ԱԱԾ տնօրենի անունով, կից գրությամբ ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը և տեղեկությունները.

1) ՀՀ ԱԱԾ տնօրենի 2015 թվականի մարտի 11-ի N 1-Ն հրամանի հավելվածին համապատասխան կազմված լիցենզիա ստանալու մասին հայտը՝ լրացված ռուսերեն լեզվով (ԵՏՄ ԱՏԳ ԱԱ տարբեր կոդեր ունեցող ապրանքների համար լրացվում են առանձին հայտեր): Թույլատրվում է տեխնոլոգիաների, արձանագրությունների, հատուկ տեխնիկական միջոցների և դրանց հանրաճանաչ հապավումների, ապրանքների արտադրողների ռեկվիզիտների անունների լատինատառ գրառում:

Հայտը ներառում է ապրանքի առանձին տեսակը կամ տեսակների ցանկը, որի համար հայցվում է լիցենզիան, իրավաբանական անձի դեպքում՝ ռեգիստրում պետական գրանցման համարը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը, անհատ ձեռնարկատեր հանդիսացող հայտատուի դեպքում՝ անձնագրի պատճենը (այսուհետ՝ հայտ),

2) հայտի էլեկտրոնային օրինակը (ցանկացած կրիչով),

3) լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման լիցենզիայի պատճենը, եթե գործունեության այդ տեսակը կապված է տվյալ ապրանքի շրջանառության հետ,

4) պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կողմից գեներացված անդորրագիրը կամ ծանուցման մեջ նշում են գեներացված անդորրագրի 20 նիշանոց ծածկագիրը,

5) արտաքին առևտրային պայմանագրի, դրան կից հավելվածների և (կամ) դրանցում կատարված լրացումների պատճենները, իսկ արտաքին առևտրային պայմանագրի բացակայության դեպքում՝ կողմերի մտադրությունը հաստատող այլ փաստաթղթերի պատճենները,

6) հատուկ տեխնիկական միջոցների տեխնիկական փաստաթղթերը, ինչպես նաև պայմանագրի պատճենը, դրան կից հավելվածները և (կամ) դրա լրացումները կամ հատուկ տեխնիկական միջոցների վերջնական սպառողի մտադրությունները հաստատող այլ փաստաթղթի պատճենը,

7) ՀՀ ԱԱԾ գրավոր հարցմամբ՝ փորձագիտական եզրակացության պատճենը և (կամ) հատուկ տեխնիկական միջոցների նմուշները:

12.1. Լիցենզիա ստանալու համար հայտատուն հայտը և Կանոնակարգի 12-րդ կետի 3-7-րդ ենթակետերում նշված փաստաթղթերը կարող է ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝«Միասնական հայտ» համակարգում ենթահայտ լրացնելու միջոցով, և ՀՀ ԱԱԾ լիցենզիա կարող է տրամադրել«Միասնական հայտ» համակարգի միջոցով:

(12.1-ին կետը լրաց. 15.02.21 N 1-Ն)

13. Ներկայացված փաստաթղթերի պատճենների յուրաքանչյուր թերթ պետք է վավերացված լինի հայտատուի ստորագրությամբ և կնիքով կամ փաստաթղթերի պատճենները պետք է կարված լինեն և դրանց վերջին էջերը՝ կնքված ու ստորագրված:

13.1. Լիցենզիան տրամադրվում է հայտատուի փաստաթղթերը ՀՀ ԱԱԾ մուտքագրվելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:

(13.1-ին կետը լրաց. 20.06.19 N 1-Ն)

14. Լիցենզիայի տրամադրումը մերժվում է.

1) լիցենզիա ստանալու համար հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերում ոչ ամբողջական կամ ոչ հավաստի տվյալների առկայության դեպքում,

2) լիցենզիայի տրամադրման համար հիմք ծառայող մեկ կամ մի քանի փաստաթղթերի գործողության դադարեցման կամ կասեցման դեպքում,

3) ԵՏՄ անդամ-պետությունների միջազգային պարտավորությունների խախտման դեպքում, որը կարող է վրա հասնել այն պայմանագրի (կոնտրակտի) կատարման արդյունքում, որի իրականացման համար հայցվում է լիցենզիան,

4) համաձայնեցնող մարմնի՝ լիցենզիայի տրամադրման հայտը համաձայնեցնելուց հրաժարվելու դեպքում, այդ թվում նաև փորձաքննության կամ տեխնիկական հետազոտության արդյունքների հիման վրա, որոնք հաստատում են, որ հատուկ տեխնիկական միջոցների ներմուծումը կամ արտահանումը կարող է վնաս հասցնել ԵՏՄ անդամ-պետության ազգային անվտանգությանը,

5) սույն Կանոնակարգի 13-րդ կետով նախատեսված պահանջների խախտման դեպքում:

IV. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ (ԹՈՒՅԼԱՏՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ) ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

15. Եզրակացության (թույլատրման փաստաթղթի) տրամադրման համար հայտատուի կողմից ՀՀ ԱԱԾ տնօրենի անունով կից գրությամբ ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը և տեղեկությունները.

1) եզրակացության (թույլատրման փաստաթղթի) նախագիծը (Ձև)՝ ՀՀ ԱԱԾ տնօրենի 2015 թվականի նոյեմբերի 30-ի N 8-Ն հրամանով հաստատված հավելված N 5 մեթոդական ցուցումներին համապատասխան կազմված և ռուսերեն լեզվով լրացված,

2) հատուկ տեխնիկական միջոցների շրջանառության ոլորտում գործունեության իրականացման լիցենզիայի մասին տվյալներ (համար, ամսաթիվ) կամ այդպիսի լիցենզիայի պատճենը,

3) արտաքին առևտրային պայմանագրի (կոնտրակտի) պատճենը, դրա հավելվածները և (կամ) լրացումները, իսկ պայմանագրի (համաձայնագրի) բացակայության դեպքում՝ կողմերի մտադրությունները հաստատող այլ փաստաթղթի պատճենը,

4) հատուկ տեխնիկական միջոցների տեխնիկական փաստաթղթերը,

5) պայմանագրի (կոնտրակտի) պատճենը, դրա հավելվածները և (կամ) լրացումները կամ հատուկ տեխնիկական միջոցների վերջնական սպառողի մտադրությունները հաստատող այլ փաստաթղթի պատճենը,

6) փորձաքննության եզրակացության պատճենը և (կամ) հատուկ տեխնիկական միջոցների նմուշները՝ ՀՀ ԱԱԾ գրավոր հարցմամբ,

7) ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր և տվյալներ:

15.1. Եզրակացությունը (թույլատրման փաստաթուղթը) տրամադրվում է հայտատուի փաստաթղթերը ՀՀ ԱԱԾ մուտքագրվելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:

(15.1-ին կետը լրաց. 20.06.19 N 1-Ն)

15.2. Եզրակացություն (թույլատրման փաստաթուղթ) ստանալու համար հայտատուն եզրակացության (թույլատրման փաստաթղթի) նախագիծը և Կանոնակարգի 15-րդ կետի 2-7-րդ ենթակետերում նշված փաստաթղթերը կարող է ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝«Միասնական հայտ» համակարգում ենթահայտ լրացնելու միջոցով, և ՀՀ ԱԱԾ եզրակացություն (թույլատրման փաստաթուղթ) կարող է տրամադրել«Միասնական հայտ» համակարգի միջոցով:

(15.2-րդ կետը լրաց. 15.02.21 N 1-Ն)

16. Եզրակացության (թույլատրման փաստաթղթի) տրամադրումը մերժվում է.

1) հայտատուի կողմից սույն Կանոնակարգի 15-րդ կետով նախատեսված փաստաթղթերը չներկայացնելու դեպքում,

2) եզրակացություն (թույլատրման փաստաթուղթ) ստանալու համար հայտատուի կողմից ներկայացվող փաստաթղթերում ոչ ամբողջական կամ ոչ հավաստի տվյալների առկայության դեպքում,

3) հատուկ տեխնիկական միջոցների ներմուծմամբ կամ արտահանմամբ անդամ-պետության ազգային անվտանգությանը վնաս հասցնելու հնարավորությունը հավաստող փորձաքննության կամ տեխնիկական հետազոտության արդյունքների առկայության դեպքում:

Ձև

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

(թույլատրման փաստաթուղթ)

N_____/201_____

_____

(Եզրակացություն տրամադրող Եվրասիական տնտեսական միության անդամ-պետության պետական իշխանության մարմնի անվանումը)

Տրված է _____

(Կազմակերպության անունը, իրավաբանական հասցեն, երկիրը / ֆիզիկական անձանց համար Ա. Ա. Հ.)

_____

Տեղափոխման տեսակը _____
(Տեղափոխման տեսակը)

_____/ /_____
(Ապրանքի միասնական ցուցակի բաժին) (Կոդ ՄՄ ԱՏԳ ԱԱ*)

Ապրանքի անվանումը	Քանակը	Չափման միավորը

Ստացողը/Ուղարկողը* _____
(Անունը, իրավաբանական հասցեն, երկիրը)

_____

Մեկնման/ուղարկման երկիրը* _____

Ներմուծման (արտահանման) նպատակը _____

Ժամանակավոր ներմուծման (արտահանման) ժամկետը _____

Հիմքը _____
_____

Լրացուցիչ տեղեկատվություն _____
_____

Տարանցման երկիրը* _____
(Տարանցման տիրույթը)

Ստորագրություն _____ ամսաթիվ _____
Եզրակացությունն ուժի մեջ է մինչև _____ _____
(Ա.Ա.Հ.)

_____
(Պաշտոն)

ԿՏ
«*» - տողերը լրացվում են հաշվի առնելով ապրանքի դասակարգման պահանջները

ЗАКЛЮЧЕНИЕ
(разрешительный документ)

N_____/201 /_____

_____
(наименование органа государственной власти государства-члена Таможенного союза, выдавшего заключение)

Выдано _____
(Название организации, юридический адрес, страна / для физических лиц Ф.И.О.)

_____
Вид перемещения _____
(Вид перемещения)

_____/ /_____

(Раздел Единого перечня товаров) (Код ТН ВЭД ТС*)

Наименование товара	Количество	Единица измерения

Получатель/отправитель* _____

(Название, юридический адрес, страна)

_____

Страна назначения/отправления* _____

Цель ввоза(вывоза) _____

Срок временного ввоза (Вывоза) _____

Основание: _____

_____

_____

Дополнительная информация _____

_____

Страна транзита* _____

(Транзит по территории)

_____

Подпись_____ Дата _____

Заключение действительно по _____ _____

(Ф.И.О.)

_____

(Должность)

М.П.

" * " - строки заполняются с учетом требований к категориям товаров

V. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ ԱՌԵՎՏՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԱՐԳԵԼՎԱԾ ՏՊԱԳԻՐ, ԱՈՒԴԻՈՎԻԶՈՒԱԼ ԵՎ ԱՅԼ ԿՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՎ ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

(գլուխը լրաց. 15.02.21 N 1-Ն)

17. Թույլատրման փաստաթղթի տրամադրման համար հայտատուի կողմից ՀՀ ԱԱԾ տնօրենի անունով, կից գրությամբ ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը և տեղեկությունները.

1) Հայաստանի Հանրապետության կողմից երրորդ երկրների հետ առևտրի դեպքում արգելված տպագիր, աուդիովիզուալ և այլ կրիչների վրա տեղեկատվության Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք ներմուծման, Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքից արտահանման, Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով տարանցիկ փոխադրման թույլատրման փաստաթղթի տրամադրումը ստանալու մասին դիմումը (հայերեն կամ ռուսերեն տարբերակով),

2) արտաքին առևտրային պայմանագրի, դրան կից հավելվածների և (կամ) դրանցում կատարված լրացումների պատճենները (առկայության դեպքում),

3) հաշիվ-ապրանքագիրը կամ բեռը ուղեկցող այլ փաստաթղթերը,

4) պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կողմից գեներացված անդորրագիրը կամ ծանուցման մեջ նշում է գեներացված անդորրագրի 20 նիշանոց ծածկագիրը,

5) տպագիր, աուդիովիզուալ և այլ կրիչների վրա տեղեկատվության նմուշները՝ ՀՀ ԱԱԾ բանավոր հարցմամբ:

18. Թույլատրման փաստաթուղթը տրամադրվում է հայտատուի կողմից տպագիր, աուդիովիզուալ և այլ կրիչների վրա տեղեկատվության նմուշները և համապատասխան փաստաթղթերը ՀՀ ԱԱԾ ներկայացվելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում:

19. Թույլատրման փաստաթղթի տրամադրումը մերժվում է.

1) հայտատուի կողմից Կանոնակարգի 17-րդ կետում նշված փաստաթղթերը չներկայացնելու դեպքում,

2) թույլատրում ստանալու համար հայտատուի կողմից ներկայացվող փաստաթղթերում ոչ ամբողջական կամ ոչ հավաստի տվյալների առկայության դեպքում,

3) հայտատուի կողմից տպագիր, աուդիովիզուալ և այլ կրիչների վրա տեղեկատվության նմուշները ՀՀ ԱԱԾ ուսումնասիրությանը չներկայացնելու դեպքում,

4) տպագիր, աուդիովիզուալ և այլ կրիչների վրա տեղեկատվության ներմուծմամբ, արտահանմամբ կամ տարանցիկ փոխադրմամբ ԵՏՄ անդամ պետությունների ազգային անվտանգությանը վնաս հասցնելու հնարավորությունը հավաստող ուսումնասիրության արդյունքների առկայության դեպքում:

(հավելվածը խմբ. 26.10.16 N 2-Ն, լրաց. 20.06.19 N 1-Ն, 15.02.21 N 1-Ն)

Հավելված N 2
ՀՀ ԱԱԾ տնօրենի
2015 թ. մարտի 11-ի
N 2-Ն հրամանի

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ ԱՌԵՎՏՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԱԾ՝ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻ ՍՏԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՏՈՒԿ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

Ապրանքի անվանումը	Մաքսային միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (ՄՄ ԱՏԳ ԱԱ) կոդը

1. Ակուստիկ տեղեկատվության գաղտնի ստացման և գրանցման համար նախատեսված հատուկ տեխնիկական միջոցներ՝	
1) ակուստիկ տեղեկատվության գաղտնի ստացման և (կամ) գրանցման համար նախատեսված լարային կապի համակարգեր,	8517 61 000-ից 8517 62 000-ից 8517 69 390 0-ից 8517 69 900 0-ից
2) ակուստիկ տեղեկատվության գաղտնի ստացման և (կամ) գրանցման համար նախատեսված ռադիոէլեկտրոնային սարքավորումներ,	8517 79 000 1-ից 8518 30 950 0-ից 8518 40-ից 8523 49 450 0-ից 8525 50 000 0-ից 8525 60 000-ից 8527-ից 8529 10 390 0-ից
3) ակուստիկ տեղեկատվության գաղտնի գրանցման համար նախատեսված էլեկտրոնային սարքավորումներ:	8519 81 510 0-ից 8519 81 550-ից 8519 81 610-ից 8519 81 650-ից 8519 81 750-ից 8519 81 850-ից 8519 89 900-ից 8523 51-ից
2. Տեսողական գաղտնի դիտարկման և տեսատեղեկատվության գրանցման համար նախատեսված հատուկ տեխնիկական միջոցներ՝	
1) տեսաապակիներ՝ դուրս հանված մուտքի դիտանցքով (pin-hole),	9002-ից

2) լուսանկարահանման խցիկներ, որոնք օժտված են հետևյալ հատկանիշներից որևէ մեկով՝ քողարկված են որպես այլ գործառույթների համար նախատեսված առարկաներ, ունեն տեսապակիներ՝ դուրս հանված մուտքի դիտանցքով (pin-hole),	9006 53 100 0-ից 9006 53 800 9-ից 9006 59 000 9-ից
3) հեռուստախցիկներ և տեսախցիկներ, որոնք օժտված են հետևյալ հատկանիշներից որևէ մեկով՝ քողարկված են որպես այլ գործառույթների համար նախատեսված առարկաներ, ունեն տեսապակիներ՝ դուրս հանված մուտքի դիտանցքով (pin-hole),	8525 81-ից 8525 82-ից 8525 83-ից 8525 89-ից
4) տեսատեղեկատվության գաղտնի ստացման և (կամ) գրանցման համար նախատեսված լարային կապի համակարգեր,	8517 61 000-ից 8517 62 000-ից
5) տեսատեղեկատվության գաղտնի ստացման և (կամ) գրանցման համար նախատեսված ռադիոէլեկտրոնային սարքավորումներ,	8517 69 390 0-ից 8517 69 900 0-ից 8523 49 450 0-ից 8525 50 000 0-ից 8525 60 000-ից 8527-ից 8529 10 390 0-ից
6) տեսատեղեկատվության գաղտնի գրանցման համար նախատեսված էլեկտրոնային սարքավորումներ:	8521-ից 8523 51-ից
3. Հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման համար նախատեսված հատուկ տեխնիկական միջոցներ՝	
1) հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման համար նախատեսված լարային կապի համակարգեր,	8517 61 000-ից 8517 62 000-ից
2) հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման համար նախատեսված ռադիոէլեկտրոնային սարքավորումներ,	8517 69 390 0-ից 8517 69 900 0-ից 8525 50 000 0-ից 8525 60 000-ից 8527-ից 8529 10 390 0-ից
3) հեռախոսային խոսակցությունների մասին տեղեկատվության գաղտնի գրանցման համար նախատեսված էլեկտրոնային սարքավորումներ:	8519 81 510 0-ից 8519 81 550-ից 8519 81 610-ից 8519 81 650-ից 8519 81 750-ից 8519 81 850-ից 8523 51-ից

4. Կապի տեխնիկական կապուղիներից տեղեկատվության գաղտնի կորզման և գրանցման համար նախատեսված հատուկ տեխնիկական միջոցներ:	8471-ից 8517 61 000-ից 8517 62 000-ից 8517 69 390 0-ից 8517 69 900 0-ից 8523 29 310 1-ից 8523 29 310 2-ից 8523 49 250 0-ից 8523 49 910 1-ից 8523 51 910 1-ից 8523 59 910 1-ից 8523 80 910 1-ից 8527-ից
5. Փոստային առաքումների և հաղորդումների վերահսկման համար նախատեսված հատուկ տեխնիկական միջոցներ:	9022 19 000 0-ից
6. Առարկաների և փաստաթղթերի գաղտնի հետազոտման համար նախատեսված հատուկ տեխնիկական միջոցներ, այդ թվում՝ շարժական փոքրաածավալ ռենտգենասկոպիկ, ռենտգենահեռուստատեսային և ռենտգենագրաֆիկական սարքավորումներ:	9022 19 000 0-ից
7. Տարածքներ, տրանսպորտային միջոցներ և այլ օբյեկտներ գաղտնի ներթափանցման և հետազոտման համար նախատեսված հատուկ տեխնիկական միջոցներ՝ 1) փականների բացման միջոցներ, 2) շարժական փոքրաածավալ ռենտգենասկոպիկ, ռենտգենահեռուստատեսային և ռենտգենագրաֆիկական սարքավորումներ:	8301 70 000 0-ից 9022 19 000 0-ից
8. Տրանսպորտային միջոցների և այլ օբյեկտների տեղաշարժի գաղտնի հսկման համար նախատեսված հատուկ տեխնիկական միջոցներ:	8526 10 000 9-ից 8526 91-ից
9. Տեղեկատվության պահպանման, մշակման և փոխանցման տեխնիկական միջոցներից տեղեկատվության գաղտնի ստացման (փոփոխման, ոչնչացման) համար նախատեսված հատուկ տեխնիկական միջոցներ:	8471-ից 8505 90 200 0-ից 8517 61 000-ից 8517 62 000-ից 8517 69 390 0-ից 8517 69 900 0-ից 8523 29 310 1-ից 8523 29 310 2-ից 8523 49 250 0-ից 8523 49 910 1-ից 8523 51 910 1-ից 8523 59 910 1-ից 8523 80 910 1-ից 8527-ից
10. Անձի գաղտնի նույնականացման հատուկ տեխնիկական միջոցներ:	9019 10 900 9-ից

11. Մարդու հոգեֆիզիոլոգիական ռեակցիաների գաղտնի գրանցման համար նախատեսված հատուկ տեխնիկական միջոցներ:	9019 10 900 9-ից

Սույն ցանկի օգտագործման համար անհրաժեշտ է ղեկավարվել ինչպես ՄՄ ԱՏԳ ԱԱ կոդով, այնպես էլ ապրանքի անվանումով:

(հավելվածը խմբ. 26.10.16 N 2-Ն, փոփ., լրաց. 15.03.22 N 1-Ն)

Հավելված N 3
ՀՀ ԱԱԾ տնօրենի
2015 թ. մարտի 11-ի
N 2-Ն հրամանի

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ ԱՌԵՎՏՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՎ ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐԳԵԼՎԱԾ ՏՊԱԳԻՐ, ԱՈՒԴԻՈՎԻԶՈՒԱԼ ԵՎ ԱՅԼ ԿՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ

Անվանումը	Մաքսային միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (ՄՄ ԱՏԳ ԱԱ) կոդը
1. Ծայրահեղական և ահաբեկչական գործունեություն իրականացնելու կոչեր պարունակող կամ ահաբեկչությունը հրապարակայնորեն արդարացնող տպագիր և աուդիովիզուալ նյութեր:	3706-ից 4901-ից 4902-ից 4908-ից 4909 00 000 0-ից 4910 00 000 0-ից 4911-ից 8523-ից
2. Իրացման նպատակով տեղափոխվող պոռնկագրական բնույթի տպագիր և աուդիովիզուալ նյութեր:	3706-ից 4901-ից 4902-ից 4908-ից 4909 00 000 0-ից 4910 00 000 0-ից 4911-ից 8523-ից

3. Ընտրությունների և հանրաքվեների մասին Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությունների պահանջների խախտմամբ պատրաստված կամ տարածվող քարոզչական տպագիր և աուդիովիզուալ նյութեր:	3706-ից 4901-ից 4902-ից 4908-ից 4909 00 000 0-ից 4910 00 000 0-ից 4911-ից 8523-ից
4. Նացիստական տարբերանշանների կամ խորհրդանիշների, կամ նացիստական տարբերանշաններին կամ խորհրդանիշներին մինչև շփոթության աստիճան նմանություն ունեցող տարբերանշանների կամ խորհրդանիշների քարոզչությանն ուղղված տպագիր և աուդիովիզուալ նյութեր:	3706-ից 4901-ից 4902-ից 4908-ից 4909 00 000 0-ից 4910 00 000 0-ից 4911-ից 8523-ից
5. Տպագիր և աուդիովիզուալ նյութեր, որոնք այնպիսի տեղեկատվություն են պարունակում, որը կարող է վնասել Մաքսային միության անդամ պետությունների քաղաքական և տնտեսական շահերին, դրանց պետական անվտանգությանը, քաղաքացիների առողջությանը և բարոյականությանը:	3706-ից 4901-ից 4902-ից 4908-ից 4909 00 000 0-ից 4910 00 000 0-ից 4911-ից 8523-ից